


ՏԵՐ ԵՒ ՏՏՈՐԵՆ
Ե. ՓՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պետք է ուղղել առ
ՏՏՈՐԵՆՔԻՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԼՐԱՅՐԻ
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

Adresse:
E. PROUSTIAN
Directeur - propr. du journal Arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Les annonces sont reçues à des prix très modérés.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Les annonces sont reçues à des prix très modérés.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

Տարեկան 100 քիտի մատուցող պարտք...	60
Վեցամսյ 50 " " " " " " " " " " " "	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՐԸ	
Տարեկան Ծրակի	20
Վեցամսյ " " " " " " " " " " " "	12

ՔԱՂԱՔԱՐԹԻ ԳԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարական վրայ է :

Խնայարարական ուղղում գրութիւնի
ես չեմ տրուիր :

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարել են :

Լ. Ս. ՄԻՒՉՈՒԱԼ Լ. Ս. Ս. ԲՈՒՅՈՒՆ
Բարեփոխումը եւ անմոռելի պայմանները
ուսումնասիրելի վերջ, ու եւ ինչ
լուսն անձ պիտի համարուի կեանքի
ապրումը գործիւն կեանքի անուան
լուսնի մասին, եւ ինչ որ ըլլալ
նախնարութեանը այս վիթխարի ու
հաշկաւոր ընկերութեան պիտի տայ
պնդուշտով ճեմ 4 թղթ էլ :

ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ
— 000 —
«Արշալոյս» ի նորակազմ Խմբագրութեան
եւ անոր վարչութեան մէջ ինչ ինչ
դեռ չ'ընտրանաւ կէտեր մնալուն եւ
պայմանագրութիւնը դեռ ստորագրուած չը
լինելուն պատճառաւ, նոր փոփոխութիւն
ները քանի մը օրեր եւս յետաձգուեցան :
«Արշալոյս» ի հասցէն նոյնը պիտի մնայ
ց'նոր անօրինութիւն :

ՑԱՔԵՐԳՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ
Գնել փափաքողը կրնան գիմել թեր-
թիս Խմբագրութեան :
Թղթակազմի գինն է 10 դահեկան ողջ :

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՊՈՒՆԱ
Հաւաստի մէկ հեռագիրը որ կը ծանուց
ցնէր թէ Պրանսիոյ Մայրաքաղաքին մէջ
կարեւոր համախմբում (միթինկ) մը անդի
ունեցած է, հրատարակեցինք արդէն. Ժողով
նայ-ճիւղ-Գեղի եւ Ռեժիսի քաղաքի իրմ-
բարիքներն այդ միթինկի մասին հրատար-
ակուած յայտնած համակրական արտայայ-
տութիւններուն ալ ծանօթացուցինք ար-
դէն մեր ընթերցողները :
Վերջին թղթաբերը այդ գումարման
մասին մեզի աւելի բացատրող, ընդարձակ
եւ մանրամասնութեան մօտեցող շահեկան
տեղեկութիւններ կուտայ (տե՛ս Երօթեկի
Գրք) տարի թիւ 64, Փետրուար 21 Շաբաթի
թիւը որ ահաւասիկ :
Վերջին կիրակի օրը Շաբթօ-տ'Օ ի
թատրոնին մէջ Կոնիկ ունեցաւ ի նպատակ
Հայ եւ Մակեդոնացի ժողովրդեան կազմա-
կերպուած ցոյցը : Չորս հազարէ աւելի անձ
նաւորութիւններ փութացած էին այդ շատ
փոքր սրահը :
Ինձին վրայ պատրաստուած սեզանին
չորը հաւաքուած էին Պարոնայք Տէս-
թուրնէլ ար Իօնիսիան, Նախագահ Պրան-
սի տը ար Բրեժանսէ, Ժորէս, Տընի Գոչէն,
Լընօլ, Անաթօլ Լընուա-Պօլիէօ, Ռուանէ,
Արիսթիտ Պրիսն, Ժօրթ Ռընան, Կապրէէ
Սէպլայ Բիէս, Բիլար, Ալգէր Մըթէն, Տկն-
Սէֆէրին են :
«Պ. Տէսթուրնէլ ար Իօնիսիան նիստը
բացաւ հետեւալ համառօտ բանախօսու-
թեանը, որ չափ ծափահարուեցաւ եւ որուն
գլխաւոր մասերը հետեւեալներն են :

Միջազգային մեկնել այն անպատիժ ու
ճիւղերը, որ ի գործ կը դրուին արեւ-
ելքի մէջ :
Հակառակ հանգիստաւորապէս եղած
յանձնառութեանը, ինչպէս հանգուր-
ժել որ ոճրագործական վարչային գը-
րութիւն մը տեւական ըլլայ : Պիտի ը-
սեն թէ՛ սուլթանը տրամադրելի ունի
քաղաքական զօրաւոր զապահակներ, եւ
զիտէ գէթ ոմանց լուսնիւր գնել, ու
կը նկատի յեղաշրջել հանրային կար-
ծիքը զայն գրգռելու համար ո՛չ թէ
բուն ոճրագործին՝ այլ անոնց դէմ, որ
իր զոհերն են : Պիտի բան նաև
թէ՛ աւելցնուածին եւ իր սատարնե-
րուն անպատմելի կնճռոտութիւնը,
ցեղաբանական բազմախմբութիւնը,
աշխարհագրական գրեց պաշտպանու-
թիւնը եւ մարդկանց իրերխառնու-
թիւնը անկանգնելի, եւ սակայն խառ-
նաշփոխ եղանակաւ պիտի խնդա-
րեն աշխարհի ուշադրութիւնը եւ
հակըդդէմ շահերը : Ո՛չ, այս ամենը
չ'պիտի կարենան բաւականապէս խեղ-
չեւու տիեզերական խղճմանը :
Մեծ տէրութեանց այս հակադրու-
թիւնը, իրենց քաղաքային ստորա-
բաժանմանց եւ անտեսական անհաշու-
թեանց տեսակէտն է, որ կ'ստեղծէ
այսպիսի անճարակութեան երևոյթ մը :
Ընդունել թէ՛ առեղծուածը անլուծե-
լի է, հաստատել է թէ յառաջիկայ
թիւերը իրականանայի չէ :
Ինչ որ անկարելի է, երաց արգի կա-
ցութեան անբարեխօսելի ըլլալը չէ :
այլ՝ անոր երկարատևութիւնը : Ինչ որ
անկարելի է, ինչ որ մեր սրտին ու
հոգւոյն գրգռու կը պատճառէ, կեղծ-
ուութեանց վերջ գնելը չէ : այլ՝ այն է
որ հրեշտակն հարստահարութիւնը կը
շարունակուին, այն է՝ որ մահու եւ
սպանութեանց զարհուրելի տեսարան-
ները կը վերանորոգուին : Լուսաւորեալ
Եւրոպային մէջ՝ Թուրքիան չ'կրնար
մահաշունչ խուարի մէջ տապալակել
եւ մեր բանականութիւնը կ'արգիլէ այս
բարբարոսական քաղաքակրթութեան
խաւաճումը :
Երեք քաղաքողոր կայ, որ Եւրո-
պան համաձայն էր բառեալ այս հարստա-
հարութեանց պատճառը : այսօր կ'ու-
րանայ այս անցեալը, եւ մեղիօրէն կը
յանձնէ հարստահարուող բռնաւորին
ձեռք : Երկու բարոյական ընդունած
են. բարոյական մը՝ այն անձերուն
համար, որոնք շատ խիստ են եւ բարո-
յական մը՝ այն ազգերուն եւ կանոնք
կազմող անհատներուն հանդէպ՝ որը
ո՛չ մի ինչ կը փոփոխէ եւ ո՛չ ալ կը
գայթակղեցնէ :
Մենք ո՛չ խնդրենք եւ ո՛չ ալ խը-
տովարանք : մենք միայն մարդկու-
թեան խղճմանքին եւ բարի գգաց-
մանց շարժիլը կը պահանջենք :
«Հայերը պաշտպանել՝ Եւրոպան
պաշտպանել է. այս ելաւ Պ. Կլաւար-
թօնի վերջին խօսքը որ անգլիացի մեծ
ձերութիւն ինձի ուղղեց, երբ Անգլիա-
յին հրաժեշտ կուտայի : Եւ կը փոր-

ձեռն արդարացի աներկիւղութեամբ մը
նախագահէլ այս շքեղ ցոյցին, այս
Պրանսիոյ մարդասիրական ցոյցին՝ ի
նպատակ հարստահարեալներուն, ըլլան
անձեր քրիստոնեայ, միաբնական կամ
հրեայ :
«Այո՛, մենք հոս ի նպատակ կը խօսինք
բայց հարստահարեալներուն, յանուն
Պրանսիոյ բոլոր կուսակցութեանց :
«Մեր ուղածը սճիւրները գաղթեցնել
է, աշխարհի խաղաղութեան սպառնա-
ցող վտանգը հեռացնել է :»
«Պ. Տընի Գոչէն յաջորդեց Պ. Տէս-
թուրնէլ ար Իօնիսիանի պաշտպանողա-
կան, սկսելով քաղաքատեղիւն մը ընել կա-
ռավարութեանց եւ ազգայն զգացմանցը մէջ,
եւ հայ ժողովրդեան կրած դժբաղդութեանց
մէկ սրտաբար պատկերը ուրուազծել է
վերջ՝ հետեւեալ եղբակացութեան յանգե-
ցաւ :
«Պէտք է որ հանրային կարծիքը մղէ
մեր վարչային անձնաւորութիւնները
օգուտութեան փութալ ու յանուն Քրան-
սիոյ բարի համբաւին : Եւ ես քրիս-
տոնեայ մը զայն կը պահանջեմ յա-
նուն մարդկութեան, որ ամէն տեղ
տիրէ իրաւունքը, ազատութիւնը՝ եւ
հաւասարութիւնը :
«Յետոյ Պ. Փ. ար Բրեժանսէ ընտելեան
անելով Եւրոպայի դիւանագիտական կա-
ցութիւնը, ամբողջովն եւ խորապէս ու-
սումնասիրեց արեւելեան առեղծուածը :
«Ուրուագրեց կիրարկելի դիւանագի-
տական յայտագրին դիւանագիտական
այսինքն 1. Մակեդոնական հարցը
անբաժան պահէլ Հայկական խնդրէն :
2. Չ'մոռնալ ինչ որ ընդունուած է-
այսինքն խոստացուած բարենորոգում-
ները : 3. Բացարձակապէս սուլթանին
չ'վստահել անոնց գործադրութիւնը,
այլ՝ անոր գործերը քննել եւրոպական
յանձնախումբի մը միջոցաւ : 4. Գոր-
ծադրել Հայաստանի եւ Մակեդոնիոյ
մէջ այն վարչային գրութիւնը, ինչպէս
որ եղաւ Արեւելեան Ռուսիոյ մէջ :
Ի վերջոյ Պ. Ժօրէս բեմ ելաւ յայտա-
բարեւոյթ որ այս վայրկեան Պրանսա ու-
շադրութիւն կը դարձնէ ատանձնելու հա-
մար այն պարտականութիւնը, որ մեծ տե-
րութիւնը ընդունած են Եօթը տարիէ հե-
տէ հայաստանի կոտորածներէն ի վեր :

դէպ, եւ ո՛չ ալ թուրք ազգը նուազա-
ցընող քաղաքականութեան մը պիտի
հետեւինք : Ինչ որ պարտականութիւն
ունինք պահանջելու, այն է՝ որ պը-
թանը իր բոլոր ժողովրդեանը երայ-
խաւորէ կեանքի ապահովութիւն, ա-
զատութիւն եւ արժանապատուութեան
պահպանում են :
«Պ. Անաթօլ Լընուա-Պօլիէօ ի վերջոյ
ընթերցման տուաւ հետեւեալ օրակարգը որ
ծափահարութիւններով քուէարկուեցաւ :
«Բարեկը Շաբթօ-տ'Օ թատրոնին մէջ
1903 Փետրուար 15 ին համախմբուե-
ցան ամէն դասակարգէ ու զաղափարէ
4000 քաղաքացիներ եւ,
Նկատելով հայաստանի ժողովրդեան
դժոխքները կացութիւնը եւ ծանր դէպ-
քերու անդադար կրկնումը,
Նկատելով որ այդ կացութիւնը հան-
րային զգացումները կը վրաւորէ եւ
ընդհանուր խաղաղութեան սպառնա-
ցող վտանգ մ'է,
Նկատելով որ ո՛րչափ հայաստանի
նոյնպիսի եւ Մակեդոնիոյ մէջ տիրող իրաց
այս ողբալի կացութեան վերջ կրնայ
գնել միայն Պրանսիոյ դաշնագրութեան
գործադրութիւնը,
Նկատելով որ նուիրական պաղատա-
կանութիւն կը ծանրանայ դաշնագրի
բոլոր ստորագրողներուն վրայ,
Կառավարութեան որ ազգուօրէն դիմում
ընեն Պրանսական կառավարութեան
աւել, Պրանսիոյ դաշնագրութեան գոր-
ծադրութիւնը ձեռք բերելու համար,
1895 Մարտ 11 ի յիշատակագրին հա-
մաձայն եւ դադարեցնելու համար թուր-
քիոյ մէջ մարդկութեան դէմ առանց
խտրութեան ցեղի, կրօնի եւ ազգու-
թեան ի գործ դրուած անվերջանալի
վայրագութիւնները :»
Այս վերջաւորութեան կը յանգի ահա
Պրանսական համախմբումը, ու եթէ այս ա-
ռաջագրութիւնները եւ որոշումները վերջին
յուսախաբութեան մը չ'մատեն որոճացող
մտքերը, հարկ կ'ըլլայ ընդունել թէ՛ եղած
ու ըլլալիք շարժումները վերապէս պիտի
յալողին արթնցնել Պրանսական կառավա-
րութեան կամաւորապէս թմրած միտքը, եւ
այս՝ արդիւնաւոր կրնայ ըլլալ հայոց հա-
մար : Այս անգամ ալ արդիւնքն է որ պի-
տի արդարացնէ ձեռք առնուած միջոցները :
ԱՐԳՈՍ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ
Գ.
2 Մարտ 1903
Սիրելի Ջաւէն
Անքուն գիշեր մը անցուցի :
— Պատճառը, պիտի հարցնես անշուշտ :
Նախ ըսեմ թէ՛ յանցանքը պէտք է մեղքներուն
քով փնտռել, անոնք այսքան կանուխէն չեն
այցելեր Եգիպտոսը, եւ այս գործին մէջ հե-
ռուէն կամ մօտէն ու եւ մեղակցութիւն չունին :
Յանցաւորը այդքան հեռուներ փնտռելու
հարկ չկայ :
Ինչպէս տան քովի փողոցին մէջ քէլլաւ
մը մեռաւ. թո՛ղ չի մեռնէր, եւ եթէ մեռաւ
յանցանքը ի՛նչ է միթէ. բայց եկու տես որ

